

աղքատի, ոչ գիտնականի ու ագէտի և ոչ էլ իշխանի ու սարկի մէջ:

Цер. Вѣст.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՏԵՐԵՆ ԼԵՋՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

ԾԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

(Շարունակ—իւն—ն):

Առաջին տարուայ լեզուի ուսուցման նկարագրութիւնը վերջացուցինք:

Երկրորդ և երրորդ աստիճանայ ընթացքի ժամանակ լեզուի ուսուցումը հարկաւ պէտք է բոլոր խնամով շարունակէ և ընդարձակէ այն ամենայն, ինչ որ աստիճանայ ընթացքում արդէն իբրեւ հիմք դրուել է: Այսուհետեւ ևս աշակերտը նախ և առաջ իմաստներ և գաղափարներ պէտք է ստանայ ուսուցչից, նոյնը պէտք է կարողանայ կանոնաւոր և գեղեցիկ լեզուով արտայայտել բանաւոր, իսկ մասամբ ևս գրաւոր: Ինչ որ վերաբերում է ընթերցանութեան, նորա վարժութիւնը ոչ միայն այն չափով առաջ պէտք է գնայ, որ չափով որ գրաւոր վարժութիւնները հաստատուում են, այլ այսուհետեւ տալագրած գիրքը պէտք է գործածուի իբրեւ նոր աղբիւր, որ տեղից որ նոյնպէս կարելի լինի քաղել իմաստներ և գաղափարներ, բայց ի հարկէ խիստ չափաւոր կիրպնով:

Այսուհետեւ ինչ որ աշակերտը պէտք է հասկանայ և ըմբռնէ՝ լեզուի վարժութիւնը շարունակելու համար, այն չը պէտք է լինին հատ հատ նախադասութիւններ, հատ հատ խօսքեր, այլ ամբողջացած ընտիր հատուածներ, իմաստալից և խոր-

հրդաւոր բովանդակութեամբ և առաջուայ պէս հարազատ հայկաբանութեամբ. (շատ զգուշանալու է աշակերտներէ վրացաբանութիւնից, թուրքաբանութիւնից, ռուսաբանութիւնից):

Ինչ որ աշակերտը ուսանում է, այն կարող է նորան երկու կողմից դժուարութիւն պատճառել. նախ նիւթը անմատչելի կը լինի, ապա և լեզուէն անհասկանալի: Առանց նիւթի՝ լեզուէն դատարկութիւն կը լինի, ուստի և աշակերտը ամենից առաջ նիւթի տէր պէտք է դառնայ այնքան, որ գէթ մի կերպ տրտայայտել ևս կարողանայ. իսկ յետոյ սովորէ մի և նոյն նիւթը ազգաբարձր զանազան կերպով արտայայտել: Եւ այս վերջինն է բուն լեզուական վարժութիւնը, այս տեղ պէտք է հասկանայ աշակերտը չափել լեզուի ճոխութեան գանձարանը:

Կանխաւ պէտք է որոշուի, թէ իւրաքանչիւր ընտիր հատուած որպիսի վարժութեանց համար աւելի յարմարութիւն ունի: Բանաւոր վարժութեանց համար սուանձին հատուածներ պէտք է յտականան, գրաւոր վարժութեանց համար — առանձին, և ընթերցանութեան համար — նոյնպէս առանձին: Անտարակոյս կարող է պատահել, որ մի հատուած երկու վարժութեանց համար՝ կամ միանգամայն բոլոր տեսակի վարժութեանց համար յարմարութիւն ունենայ:

Այս ընդհանուր նկատողութիւններից յետոյ՝ գտնելով, թէ ինչպէս կրթութիւնները ի նկատի առնուեն, որոնք որ 2-դ և 3-դ տարուայ ուսման գործը պէտք է կազմեն: —

ԲԱՆԱՍԻՐ ԼԵԶՈՒ: Յայտնի է թէ որքան կարեւոր կրթութիւն է բանաւոր լեզուի համար՝ քերական «երբեւի» բայց սերտելու գործը կարելի է հեշտացնել և դժուարացնել, աշակերտը կարող է այդ գործից շահուիլ և գրավաստակ մնալ: Ուստի և պէտք է հոգալ, որ

ա) Հատուածի բովանդակութիւնը կանխաւ հասկանալի դառնայ կատարեալ կերպով:

բ) Հասկացածը պէտք է դասաբան մէջ անգիր ուսուցանուի, և ոչ թէ տան մէջ սերտել տալ, ուր որ աշակերտը առանց տառաջնորդի է մնում և վարժվում է տգեղ արտասանութեամբ:

գ) Աշխատութեան ամբողջ յիւթը՝ նախ քան մաս մաս սերտել տալու՝ պէտք է ուսուցիչը ամենագեղեցիկ արտասանութեամբ հիւսիս ձեռք իւր բոլոր կապակցութիւններով աշակերտների առաջ կարգայն Ապա աշակերտը այս ամբողջութիւնը լաւ լսելուց յետոյ՝ սկսում է մաս մաս սերտել, գործեալ ուսուցչի արտասանած օրինակով և նորա հետ ի միասին ստերով:

դ) Մաս մաս սովորեցնելու ժամանակ՝ ամբողջութեան կրտորները չը պէտք է իրարից անբնական կերպով անդամալուծուին, այլ այնպէս պէտք է տրոհուին, որ իմաստի համեմատ յօդաւոր մասեր կազմեն, երբեմն մի տողի, երբեմն երկու տողի ընդարձակութեան չափով, նայելով ներքին կապակցութեան: Եթէ ընտրած մասը անսովոր բուերով կամ դարձուածներով է արտայայտած՝ կամ դժուար համաձայնութեամբ է կապուած, պէտք է սովորական բուերի և յայտնի դարձուածների վերածուին, և այդպիսի կամուրջով առաջնորդուի աշակերտի ըմբռնումը:

ե) Մի մաս ուսուցանելուց յետոյ՝ նախնական մասերը պէտք է նորա հետ ի միասին միաւորած կրկնուին, գլխից մինչև սովորած կէտը:

զ) Արդիւնքը այն պէտք է լինի, որ աշակերտը միայն այն անգիր սերտէ, ինչ որ իսկապէս է. նորա առողջանութիւնը կանխաւոր պէտք է լինի. նա չը պէտք է արտասանէ արուեստականալ ձևերով ու շարժումներով, երեսը ազատութեամբ պէտք է դարձնէ իրան լսողների կողմը և ոչ թէ գրքի գերի դառնայ կամ մթութեանց ծանրութիւնից տանջուի. միով բանիւ նա պէտք է հասկանալով, դիտելով և լայելաւ արդասանութեամբ յայտնէ այն, ինչ որ բերան է արել:

է) Ոչ միայն հատ հատ աշակերտների, այլ և ամբողջ դասատուները պէտք է կարողանայ խօսել ի միասին ասել սերտածները մաքուր և ներդաշնակ ձայնով:

ԳՐՈՒԹԵԱՆ Վարժութիւններից այս հատ ուղղում ամենից կարեւորն են 1. գրի առնուլը կամ արձանացուլը, ապա նորա վերայ հիմնուած՝ 2. գրքից արտագրութիւնը և 3. թելագրութիւնը:

1. Արշակունի. Այս անտփոր անունը չը պէտք է շփոթէ ընթերցողին, այլ պէտք է լաւ ըմբռնել, ինչ որ դա նշանակում է: Երբեք այս անունը չպիտի խառնուի այլ անունների հետ:

Այս վարժութիւնը, որ առաջին տարին միայն հատ հատ պարզ նախադասութիւններով է կատարուել, այնուհետեւ փոքրիկ հատուածներով պէտք է կատարուի: Վարժութեան նպատակն այն է, որ աշակերտը հետզհետեւ կարողութիւն ստանայ բոլորովն անհաղ զրել, ինչ որ միայն ձեռնարկում է գրելու: Ամէն մէկ բառ աշակերտները գրում են միաժամանակ, խմբով և ուսուցչի բաղնիքի հետեւելով: Գրելուց առաջ և գրելու հետ ի միասին ամենայն բառ լուծում են վանկերի և հնչիւնների. նոքա իրանց աշխատութեան ժամանակ առաջնորդվում են ձայնական ազդեցութեամբ, մտադիր են քերականական կազմութեան, անանցմանց և սուղաբանութեան, որքան որ այս ամէնը յայտնի է նոցա՝ իրանց նախընթաց ծանօթութիւններից և վարժութիւններից:

Գրի առնելու վարժութիւնը պահանջում է թէ՛ ուսուցչից և թէ՛ աշակերտներից անխնայ աշխատութիւն: Ուսուցիչը պէտք է իւր խօսելիքները արատաւնէ պարզ, յօդաւոր և ուղիղ հնչմամբ, աշակերտը պէտք է ուշիմութեամբ լսէ և իւր լսածը ճշգիւ վերարտագրէ և գրով պատկերացնէ: Ուսուցչի գլխաւոր հոգսը պէտք է լինի, որ աշակերտը բոլոր ստացած տեղեկութիւններն ու ծանօթութիւնները միշտ պատրաստ պահէ գործադրութեան ժամանակ. այդ գանձը անդադար ածեցնէ և հետզհետեւ այնքան հարստացնէ, որ այնուհետեւ տեղն եկած ժամանակ պիտանի կերպով օգտուի նոցանից: Ուստի հարկաւոր է որ ուսուցիչը յարմար դէպքերում յիշեցնէ գիտեցածը, շրջահայել տայ նախկինը հետեւորդի հետ միատեղ, ցիրուցան տեղեկութիւնները մտքի մէջ միաձոյլ ամրացնէ: Իսկ աշակերտը միշտ աշխուժութիւն պէտք է ունենայ յիշելու, համեմատելու, նմանը նմանի հետ զուգակցելու, իւր բոլոր գիտութիւնները ընդհանրացնելու և նոցանից կանոններ կազմելու:

Նախ քան գրելը՝ պէտք է ամենայն ինչ նկատուի, ինչ որ

հաւանականաբար շփոթութիւն կարող է առաջացնել: Պէտք է կանխաւ հետազոտուի, թէ հատուածը ինչ տեսակ նախադասութիւններից է կազմուած՝ արդեօք պատմական, հրամայական թէ հարցական նախադասութիւններից. ուրեմն—նորա՞րէն կետադրութիւններով իսկ նոցա մը բառերը գլխատառով պէտք է գրուին: Գրելուց առաջ իւրաքանչիւր բառ պէտք է բերանացի լուծուի վանկերի, վանկը՝ հնչիւնների, նկատելով թէ ուղղագրութեան համեմատ՝ տարակուսելի հնչիւնները ի՞նչպէս պէտք է գրուին:

Աշակերտը զոր օր. ասում է. բառն է՝ այս, վանկ՝ այս, հնչիւններ՝ այ, այ: Երկրորդ բառն է՝ ծառից, վանկեր՝ ծա—ռից, առաջին վանկի հնչիւններ՝ ա, ծա. երկրորդ վանկի՝ ի, ից, ից (այսինքն՝ ապուլ և ոչ թէ բէուլ):

Եթէ հատուածի մէջ բառը կրկին անգամ է պատահում, աշակերտը էլ չի լուծում: Այլ ասում է թէ յայտնի է կամ ապրէ՞ս պատահել է: Մինչև անգամ վանկի կամ նորա վերջաւորութեան համար պէտք է ասուի թէ յայտնի է. զոր օր էլս— գրելուց յետոյ՝ յայտնի պէտք է համարուի տուաւ, կորաւ, հասաւ, մուտ— բառերի երկրորդ վանկի վերջաւորութիւնը:

Հասկանալի է, թէ երբ որ աշակերտը տարակոյս ունի լծորդ տառերի գրութեան մասին, նա պարտաւոր է ուսուցչից հարցնել, իսկ սա կամ բերանացի կամ տախտակի վերայ գրելով կը փարատէ նորա տարակոյսը: Զոր օր, ծառից, տուաւ, հասաւ բառերը լուծելիս՝ աշակերտը պէտք է տեղեկանայ՝ « գրէ թէ ր, « գրէ թէ վ կամ », և գրէ թէ յ:

Սոքա էին արձանացման նախապատրաստութիւնները:

Նոյն իսկ արձանացման վարժութիւնը՝ չորս աստիճան ունի. որոնցով որ աշակերտը աւելի և աւելի ձեռնհասութիւն է ստանում՝ սրչափ կարելի է գործը անձնիշխանութեամբ կատարելու, այսինքն հետզհետէ նուազեցնել իւր կախումը ուսուցչի առաջնորդութիւնից: Աստիճաններ կազմում են՝ վանկ, բառ, նախադասութիւն և հարաւոր:

Ա. ԱՍՏԻՃ. Ասացէք հատուածի խորագիրը:—Առաջին բառը:—Առաջին վանկը:—Հնչիւնները:—Գրիչները պատրաստ

ունեցէք. (աշակերտները գրիչը պատրաստ պահում են, աչքերը տետրակի վերայ դարձրած. և հէնց որ ուսուցիչը նշան է տալիս բաղխմամբ, բոլոր աշակերտները միասին սկսում են գրիչները շարժել, մինչև որ աւարտեն վանկը):

Երկրորդ բառը:—Վանկերը:—Առաջին վանկը:—Հնչիւնները:—Պատրաստ ունեցէք:—Մին, երկու . . . : Առաջին ասութիւն:—Առաջին նախադասութիւն:—Առաջին բառ:—Վանկեր:—Առաջին վանկ և այլն:

Ասութիւնները, նախադասութիւնները խմբով են տրտառանում: Գրութիւի բառը ծանուցանում է աշակերտներից մէկը, ում որ ուսուցիչը պատուիրել էր: Իսկ վանկերի և հնչիւնների լուծումը դարձեալ միասին են կատարում:

Ուսուցչի աչքը պէտք է աշակերտների գրիչներին հետևէ և նոցա գործը հսկէ. սխալները զգուշացնելու համար՝ նա պէտք է այս ու այն հանգամանքը յիշեցնէ:

Եթէ մի բառ երկրորդ անգամ պատահի, նշանակուած աշակերտը նոյն բառը ծանուցանելուց յետոյ՝ աւելացնում է, թէ յայտնի է: Այդ մի նշան է, թէ էլ կարեւորութիւն չը կայ վանկերը կանխաւ լուծելու. բայց որովհետև գրութիւնը վանկէ վանկ է կատարւում, իւրաքանչիւր վանկ՝ գրելուց առաջ՝ այնուամենայնիւ պէտք է անշուշտ արտասանուի և ապա թէ գրի առնուի:

Մի ասութեան գրութիւնը վերջացնելուց յետոյ, պէտք է վերաստուգութեան համար կարդացուի այն գրածը, իսկ ամբողջ հատուածը վերջացնելուց յետոյ՝ նաև նոյն ամբողջութիւնը—գլխից մինչև վախճան:

Բ. ԱՍՏՃ. Այս տեղ դասատան գործը այլ կերպարանք է առնում: Թէպէտ ասութիւնները, նոցա նախադասութիւնները և բառերը դարձեալ բոլոր աշակերտները միատեղ են ծանուցանում, սակայն հատ հատ բառերի գծագրութիւնը թողնւում է, որ իւրաքանչիւր աշակերտ ինքը լուծէ վանկերի և հնչիւնների՝ իւր ձեռնհասութեամբ և անկախ կերպով: Նա այս գործը կատարած է կիսայն աշխատանքով: Իսկ մի բառ աւարտելուց յետոյ միւս բառին անցնելու հրամանը՝ դարձեալ

ուսուցիչն է տալիս, չը պահանջելով, որ վաճառի տառերը միանուագ գրեն, այլ թուղթում է, որ իւրաքանչիւր աշակերտ սովորէ ազատ գործելու:

Աստուծոյ, թէ կարգը եկել է, որ գրուի հարցաւէր թաղը: Ամբողջ դասատուներ արտասանում է թաղը: Ապա պատուէր են տալու մէջ գրելը պատրաստ ունենալ, — Գրէ՛ք + արդասանելով: Եւ իւրաքանչիւրը կիսաձայն արտասանում է՝ հարցաւէր, հարցաւէր — հար. և ահա նա սկսում է այս վանկը գրել և հետը զուգընթաց արտասանել: Այդ աւարտելուց յետոյ, շարունակում է արդէն գրածի արտասանութիւնը յաջորդ վանկի հետ՝ հարցաւ — ցա. և այժմ գրում է այս վանկը ևս. ապա շարունակում է՝ հարցաւէր — օր. և բառը լրացնում է իւր երրորդ վանկով:

Խոտիւ պէտք է պահանջուի, որ աշակերտները չը ծուլանան և անշուշտ արտասանեն, ապա թէ ոչ գրութեան մէջ պակասներ կ'երևան:

Գ. ԱՍՑԶ. Այս անգամ էլ աշակերտը մի քայլ ուելի անկախութիւն է ձեռք բերում: Աւսուցչի հրամանով է կատարուում միայն ամէն մէկ ստութիւն և նախադասութիւն ձեռակերպելու օկզբնաւորութիւնը: Այս հարկաւոր է նորա համար, որ դասատան աշխատութիւնը յետեւառաջ և խառնիժութեամբ չը գնայ և մանաւանդ որ դանդաղները առիթ չունենան իրանց հարկաւոր արթնութիւնն ու զգաստութիւնը թուլացնելու: Իսկ մնացած բանում իւրաքանչիւրի աշխատութիւնը այն պէտք է լինի, որ նա ինքը կիսաձայն արտասանութեամբ պատրաստէ իւրաքանչիւր նախադասութիւն՝ արձանագման համար, անձամբ լուծելով այն ամէնը, ինչ որ առաջին երկու աստիճաններում ուսուցչի առաջնորդութեամբ է կատարել, իսկ այժմ ստորել է գործել առանց օգնութեան: Սակայն փորձը ցոյց կուտայ, թէ անշուշտ ամէն տեսակ սխալների դուռը կը բացուի, եթէ աշակերտները օկսեն գրել առանց հետը արտասանելու. մտաւորութեան կը տրուին մի քանի վանկեր, գուցէ և բառեր, կամ տառերը յետուառաջ կը փոխադրուին:

Հարկաւոր է անգաղաք հսկել աշակերտների գործը:

Դ. ԱՍՅՃ. Աշակերտները անձամբ գրում են մի ամբողջ հատուած, այլ ևս ամէն բանի մէջ ուսուցչի առաջնորդութիւնը չը ստանալով, բայց նոքա իրանք իրանց կ'առաջնորդեն այն կարգերով, ինչ որ սովորել են: Նոքա ուրեմն գրութեան գաղանիքը հասկացել են և լաւ գիտեն, թէ երբ է հարկաւոր ուսուցչի խորհրդին դիմել: —

Թէ այս աստիճաններից որը որ տարուայ մէջ գործածուի, այս անկարելի է կանխաւ սահմանել: Ի հարկէ առաջին տարին տւելի կը յաջողուին ա. և բ. աստիճանները: Իսկ չորրորդ աստիճանը գուցէ ուսման երեք տարուայ ընթացքում երբէք չը հասնի կատարելութեան: Յաջորդութիւնը կախուած է շատ հանգամանքներից, ուսուցչի կանոնաւոր առաջնորդութիւնից, աշակերտի ընդունակութիւնից, հատուածի ընտրութիւնից: Միայն թէ մինչև որ աշակերտի ոյժը չը զօրանայ, խորհուրդ չ'ունի ոտորին աստիճանը թողած՝ նորա վերայ ծանրաբեռնել աւելի դժուարագոյնը: —

Գրի առնելու վարժութիւնը այն հիմքն է, որով որ կը յաջողի արդիւնաւոր կերպով արտագրութիւնն ու թելագրութիւնը:

2. Արագբութիւն: Այս վարժութեան գլխաւոր նպատակը այն պէտք է լինի, որ նա մի միջոց դառնայ «արագբութիւնը» աւելի հաստատելու համար: Եւ հէնց այս տեսակէտից էլ նոյնը կը պարզաբանենք:

Եթէ նոր է սկսվում գրութեան ուսումը, այդ ժամանակ դեռ ևս վաղ է արտագրութեան գործածութիւնը. և թէ պէտ արտագրութիւնը միշտ համարուել է ամենահեշտ և օգտաւէտ կրթութիւն, բայց մոռանում են այն հանգամանքը, թէ արտագրութիւնը միայն այն ժամանակ պիտանի վարժութիւն կը դառնայ, երբ որ իրանից առաջ հարկաւոր նախապատրաստութիւններ կատարուել են: Մինչև որ արտագրութիւնը գիտակցական ընթացք և եղանակ չը ստանայ, նա չի դառնայ ուղղագրութեան նպաստիչ մի հնար: Կարելի է ամբողջ հատուածներ արտագրել տալ, բնաւ օգուտ չը տալով: Եթէ աշակերտը արտագրէ ոչ թէ նախագատութիւնների լրութիւնը, ոչ

Թէ բառերի լրութիւնը, այլ միայն ու տառեր, որոնց նշանակութիւնը որ դեռ ևս չի ըմբռնել, այս կը լինի մեքենական գործողութիւն և կատարեալ ժամավաճառութիւն: Օգտուէտ արտագրութիւնը այն կը լինի, եթէ նորա մէջ կրկնվում է գրի առնելու կամ արձանագման այն գործողութիւնը, որ վերը նկարագրուեցաւ, միայն այն տարբերութեամբ, որ արտագրութեան ժամանակ ուսուցչի տեղը բռնում է բաց արած գիրքը:

Այս գործը կատարվում է հետեւեալ կերպով: Աշակերտը գրքից մտադրութեամբ կարդում է մի աֆօղջ նախադասութիւն կամ ասութիւն, նոյնը կիսաձայն կրկնում է՝ այլ ևս գրքին չը նայելով, և որոհում է բառերի: Այնուհետև մի անգամ էլ իւր բոլոր ուշադրութիւնը դարձնում է նախադասութեան բառերի վերայ կարգով մէկմէկից յետոյ և նոցանից իւրաքանչիւրը կամացուկ կարդում է, բայց յօդ յօդ բաժանելով: Եւ երբ որ այսպէս ամենայն ինչ արտասանում և իւրաքանչիւր տարակուսական գրութիւն տեղնուտեղը անձամբ մեկնում և ծանօթանում է, ապա ընենախառնութիւնը գրած է, որչափ կարելի է լրիւ և անպակաս, և վերջապէս իւր գործը ստուգելու համար՝ արդէն ձեւացուցած բառերի պատկերը համեմատում է տպագրածի հետ: Ի հարկէ կարելի է բառը զննելու ժամանակ՝ հետը հեգել գրքի վերայ՝ բայց աւելի լաւ է, եթէ աշակերտը բառը ընթերցանութեամբ զննելուց յետոյ՝ իւր մտքի մէջ լուծէ նոյնը վանկ վանկ: Ուրեմն այսպիսի արտագրութեան ժամանակ ոչ թէ աշակերտի միայն աչքն ու ձեռքը գործ կը տեսնեն, այլ և միտքն ու գիտակցութիւնը: Նա ոչ միայն կ'ընդօրինակէ, այլ և կը դիտէ և բան կը սովորէ:

Այսպէս գործելու համար աշակերտը վարժութիւն պէտք է ստանայ ուսուցչի հսկողութեան ներքոյ: Վարժութիւն տալուց յետոյ ևս՝ ուսուցիչը պարապ չը պէտք է մնայ, երբ որ աշակերտին պատուիրում է արտագրել: Աշակերտները մեծ սէր չ'ունին այնպիսի աշխատութեան համար, ուր որ նոցանից պահանջվում է կատարեալ ուշիմութիւն: Նոցա վերայ պէտք է անդադար դիտող աչք լինի, որ միշտ նոցա առաջնորդէ և ուղղութեան շաւղի մէջ պահէ: Հասկանալի է, որ արտագրու-

Թեան ենթակայ հատուածը թէ՛ ձեռով և թէ՛ բովանդակութեամբ ըմբռնելի պէտք է լինի փոքրիկ աշխատաւորների համար:

3. Թելադրութիւն: Այս վարժութիւնն էլ պէտք է կատարուի ուղղագրութիւնը աւելի հաստատելու համար, բայց այստեղ էլ անկարելի է հնձել, ինչ որ կանխաւ չէ սերմանա՞ծ: Որպէս զի վարժութիւնը արդիւնաւոր լինի, պէտք է որ աշակերտները կանխաւ ուսումնասիրեն «ղլադրութեան պետական» այն, ինչ որ պէտք է թելադրուի: Այս պատրաստութիւնը կամ պէտք է թողնուի աշակերտին և կամ կատարուի ուսուցչի առաջնորդութեամբ: Նոքա պարտաւոր են պատրաստել և ուսումնասիրել, թէ ի՞նչպէս պէտք է գրուի մի հատուած կամ նորա բաժինը կամ արդէն անգիր սերտածը— թէ՛ ուղղագրութեան և թէ՛ կէտագրութեան կողմից: Նոքա պէտք է սովորութիւն ստանան՝ այդպիսի պատրաստութեան ժամանակ՝ իւրաքանչիւր տարակուսելի բառ հեգել, գիրքը ծածկած, և անուանել միայն այն տառերը, որոնք որ հաւանականօրէն սխալ կարող են գրուիլ, զոր օր. «վարդավառ» բառի նկատմամբ աշակերտը պէտք է ասէ, թէ երկրորդ վանկը պէտք է գրուի «այով», իսկ վերջն վանկը «այով»: Կէտագրութիւնը նա պէտք է աւելի արտասանութիւնից և լսողութեան ազդմամբ զգայ. մի նախադասութիւն կարդալուց «ետոյ՝ իսկոյն պէտք է ասէ, թէ այս ինչ բառը բռն լուրջ է, այն ինչ բառը՝ ստորակէտ, երրորդ բառը՝ հարցական պէտք է ունենայ:

Թելադրութեան ժամանակ պէտք է պահպանել հետեւեալ կարգը. ա) Ուսուցիչը կամ աշակերտներից մէկը մի նախադասութիւն է կարդում, և նախ քան գործը սկսել տալու և գրիչներ շարժեցնել տալու, ի՞նչպէս աշակերտները՝ գուցէ և ամբողջ դասատունը կրկնում է մի և նոյնը. բ) Թելադրութեան դասը այսպէս շարունակելուց և աւարտելուց «ետոյ՝ հարկաւոր է ամբողջը կամաց ձայնով մի անգամ ևս ի լսւթ առնելու» կարդալ, որպէս զի անուշագրութիւնից բաց թողած պակասները յիշեցնուի նոցա. գ) Պատասխան աշակերտներին, որ գրութիւն մի անգամ էլ գլխից մինչև վերջը մտադրութեամբ և լուռ

աշխատութեամբ «սոս-գէն» ուղղագրութեան կողմից. դ) Ապա իւրաքանչիւր երկու աշակերտ տետրակները իրար հետ փոփոխուած են և գիրքը բաց անելով սկսուած են սրբագրել՝ սխալները ֆայն շշմեկով կամ ստորագծելով. ե) Երբոր տէրը ընկերից իւր տետրակը ստանայ, վարժապետի պատուէրով նա պէտք է քաջայայտ ասէ, թէ ինչ ոխալներ է արել և թէ նոքա ինչպէ՞ս պէտք է ուղղուին:

ԸնթերթԱՆՈՒԹԵԱՆ վարժութիւնների համար ասել ենք, թէ գրագիտութեան առաջին տտիճանի նպատակը այն չի կարող լինիլ, որ աշակերտը սկսէ կարգալով գրքից քաղել այս կամ այն բովանդակութիւնը: Բայց որովհետեւ մանուկները ամենամեծ եռանդով փորձում են իրանց փանաքի հմտութիւնները գործածել իբրեւ բանալի, որպէս զի ի յայտ ածեն այն, ինչ որ գրած կամ տպագրած թղթի մէջ փակուած է: Ուստի և նոյա համար յատկացրած պէտք է լինին և հեշտ կարգալու այնպիսի հատուածներ, որ նոյա միջնորդութեամբ նոքա կարողանան առանց ուրիշի օգնութեան ճաշակել իրանց հմտութեանց պրտողները: Դժբաւե՛ծ մասով այն հատուածներն են, որ բանաւոր վարժութեանց ժամանակ աշակերտներին արդէն պատմուել են, իսկ ապա կարդալու է տրվում նոյա: Բայց այսպիսի ընթերցանութիւն առանց նախապատրաստութեան՝ չի յաջողվում. ուստի ընթերցանութեան վարժութիւններից յիշենք նախ՝

1. Ընթերցանութիւն նախապատրաստութեամբ: Միանգամայն անթերի և անպակաս յառաջադիմութիւն՝ չի կարող մանկական կրթութեան սկզբունք համարուիլ. դա կը լինի օին և խաբուսիկ յոյս: Ուրեմն և տարրական գրութեան ու ընթերցանութեան պահանջները ևս միանգամից լրութիւն ստանալ չեն կարողանայ: Միշտ կը պատահի, որ ընթերցանութեան հատուածը այնպիսի անսովոր ձևեր և դարձուածներ հանդիսացնէ՝ փոքր աշակերտների առաջ, որ նոքա մինչև այդ ժամանակ առիթ չեն ունեցել ոչ գրել և ոչ կարդալ: Աշակերտին բանաւոր կերպով պատմելիս՝ ի հարկէ կարելի է մի անծանօթ ձև կամ դարձուածք առ ժամայն զանց առնել և չը գործածել, ինչ որ

քննագրի մէջ պատահում է: Բայց ընթերցանութեան ժամանակ հարկաւ պէտք է կարդացուի այն ամենայն, ինչ որ գրքի մէջ դրոշմուած է: Ուրեմն բացի այնպիսի նախապատրաստութիւնից, որ բովանդակութեան մթութիւնները լուսարանում է, երկրորդ նախապատրաստութիւնն էլ այն պէտք է լինի, որ բառի անճանօթ կազմութիւնը, կապակցութիւնը կամ կիրառութիւնը կանխաւ հասկանալի կացուցանէ: Ահա այդ անճանօթ մասը պէտք է զատուի, սեւ տախտակի վերայ գրուի, լուծուի, կարդացուի, այսինքն մէջ տեղից բարձուի ամենայն խոյւ և խուօթ, ինչ որ անսպթաք ընթերցանութեան արգելք կարող է լինել:

2. Ընթերցանութեան դէմքը, ժամանակը, կամ դարձումը յիշողութեանը: Համառօտութեան համար քանակութիւններից շատը իւր տեղը չը յիշատակեցինք: Վոր օր. այս միւսնայն կըրթութիւնը կարող է այն տեղ էլ օգտուի գործածուի: Այս կըրթութիւնը զանազան փոփոխութիւններ է առաջ բերում պատրաստ շարագրած նիւթի մէջ: Արդ ինչ փոփոխութիւններ որ պէտք է կատարուին, դոքա իսկապէս ասելով հոլման վարժութիւններ են, բայց ոչ թէ սովորական տախտակների, աղիւսակների և յարացոյցների ձեւով, այլ լեզուի կենդանի արտայայտութիւններով, ամբողջ նիւթը գլխէի գլուխ նորից ձեւացնելով, Բաւական է, որ այդպիսի փոփոխութեանց միայն սկզբնաւորութիւնը ցոյց տանք, օրինակ առնելով «Արաքսի արտասուներ»:

Մանուկները պատուէր են ստանում երեւակայել, իբր թէ ինչ որ բանաստեղծը պատմում է իւր և Արաքսի մասին, հէնց այժմ կատարվում է մեր աչքի առջև. «Բանաստեղծը գալիս է (ոչ — եկաւ) Արաքսի ափերով և սորա ալեաց մէջ պլորում է (ոչ — պտրեց կամ պտրում էր) հին հին դարուց յիշատակներ: Բայց Արաքսի ալիքները պղտոր ջրով եզերքին դարիւ դարիւ խփելով (առանց խաղաղուելու) լալագին փախչում են: — Ուրիշ ձեւ. «Մինչդեռ բանաստեղծը քայլամուր թափառում էր Արաքսի ափերով և նորա ալեաց մէջը պտրում էր հին հին դարուց յիշատակներ» — ալիք-

ները պղտոր ջրով եղբերքին դարիւ դարիւ խփելով՝ միշտ լալագին փախչում էին իրար յետևից։ — Կամ դարձեալ. «Բանաստեղծը (մի օր) քայլամուկոր կու գայ Արաքսի ափերով, որ նորա ալեաց մէջ չին հին դարուց յիշատակներ պտռէ. բայց նոքա պղտոր . . . լալագին փախչելիս կը լինին»։ Շատ կարեւոր է և այս ձևը. «Բանաստեղծը պատմում է, թէ ինքը թափառելիս է եղել Արաքսի ափերով և պտռելիս է եղել . . . բայց նոքա . . . միշտ յեղյեղուկ լալագին փախչում էին նորանից։ Եւ թէ Արաքսին դառնալով, հարցրել է նորանից, արդեօք նա ինչո՞ւ մանկական պար չի բռնում ձկանց հետ և դեռ ծովը չը հասած՝ սգաւոր է իրա պէս։ Ապա աւելացնում է, թէ . . . »։

3. Ընթերցանութիւն՝ «Հղագրութիւն» Բաղարբեով. Այսպէս պէտք է կարդացուի ամենայն հատուած, որը որ յետոյ պէտք է գրի առնուի, արտագրուի կամ թելադրուի։ Ի հարկէ կարդալու ժամանակ աւելորդ է այնպիսի բացատրութիւններ տալ, որոնք որ վաղուց արդէն հաստատ ծանօթութիւն են դարձել։ Աշակերտը պէտք է ազդուի, թէ իրան միշտ առաջ են տանում։

Գործը այսպէս է կատարւում. Ուսուցիչը բառ առ բառ կարդում է հատուածը, աշակերտներն էլ իրանց գրքերում նայելով լսում են նորան. նա մի քանի բառերի կարեւոր հընչիւնները նշանում է, միւսները առանձին քննում է կազմութեան և ծագման կողմից, հարցմունքներ է տալիս, աւելի նոյն միտքը լարելու համար և ամենեւին կարեւորութիւն չունենալով, որ նոյանից միշտ պատասխան ստանայ։ Այն բառերը, որոնք որ բացատրութեան կարօտ չեն, թէպէտ նոյնպէս կը կարդացուին, սակայն թոյլ և միակերպ ձայնով, և միայն այն նպատակով, որ դատաւորունը ընթերցուածի թելը չը կորցնէ և պատրաստ լինի ուշադրութիւն նուիրելու այն դէպքերում, ուր որ արթնութիւն հարկաւոր կը լինի։ Մի նախադասութեան օրինակով ցոյց տանք այդ գործողութիւնը, բացատրութեան անկարօտ բառերը հարեանցի նշանելով. «Ծիծեռնակ (ծիծեռն, ո՞ւ համաձայն կանոնի ո՞ւրից առաջ ու. ա՛յ՛ աճանցեալ վերջաւորութիւն) դ. գարնան (ը՞ն և ոչ ո՞ն, որովհետեւ սղուել է գաւորունք բառից և ու կորուսուել է) ու. թ. դ. ու. ի. ասա (հրա-

մայական, առանց յ) Թ. ա. արագ (— Է՞ Թէ չ, վերջը գիմ և ոչ Թէ +է): Այն բառերը որոնց մասին որ ոչինչ նկատողութիւն անելու հարկ չըկար, նշանուեցան իրանց սկզբնական տառերով:

4. Ընթերցանութեան՝ Էդուէ յետեւ — Կերասութեւն հասկանալով. Այս նպատակով բացատրութիւնները գլխաւորապէս երեք կարգի կարող են լինել. նախ՝ խօսակցող անձինքների սրոշումը, երկրորդ՝ դերանունների, շարկապների և մակբայների յարաբերութիւնները խօսքի մէջ, և վերջապէս նախադասութեան անդամների պաշտօնը հարցմունքների միջնորդութեամբ: Օրինակը աւելի կը լուսաբանէ այս ամէնը. «Դուք ի՞նչ բանի էք հարցրեց ծիծեռնակի ձագը մըջիւններից:— «Ձմեռուայ պաշար ենք հաւաքում», լսուեցաւ Ժրաջան աշխատաւորներից պատասխանը: «Հախ Աստուծո, խելք է», ասաց ծիծեռնակը, «ես էլ կիրթամ այդ բանի»: Եւ իսկոյն սկսեց ճանճեր ու մամուկներ կրել իւր բոյնը:— «Մի աստ ինձ, Թէ ինչի՞դ է այդ հոգսն ու աշխատութիւնը, վերջապէս հարցրեց նորա մայրը:— Ի՞նչ. սա, սիրելի մայրիկ, մեր ձմեռուայ պաշար կը լինի, որ ցրաին քաղցած չը մնանք: Ե՛կ, դու էլ օգնիր ինձ. ես այս խելքը մըջիւններից սորուեցայ»:— «Մըջիւններին թող տուր» ասաց ծերացած մայրը: «Աստուած մեզ տուել է տւելի նախանձելի վիճակ. հենց որ առատաձեռն ամառը վերջանայ, մենք էլ վեր կը կենանք այս տեղից և կը հեռանանք»:

ա) Խօսող անձինքների որոշումն:—Այս առակի մէջ ի՞նչ կենդանիներ են խօսում: Կրկեցէք ձագի, ծերացած ծիծեռնակի, մըջիւնների խօսքերը: Իսկ ռում խօսքեր են՝ հարցրեց ծիծեռնակի ձագը մըջիւններից. էլ ուրիշ խօսքեր կա՞ն պատմողի բերանից ասած:

բ) Կիրառութիւն:—Ի՞նչ խօսքով է դառնում ծիծեռնակի ձագը մըջիւններին. ի՞նչ պատասխան է ստանում նոցանից: Խելք է կամ խելօքութիւն է, ասաց ձագը. ի՞նչն է խելք:— Ես էլ կիրթամ այդ բանի. ի՞նչ բանի է ուզում գէալ:— Եւ իսկոյն սկսեց. ի՞նչ է ասում ինչո՞ւ բառը (իւր խօսքը ասելուց յետոյ՝ անյապաղ սկսեց կրել . . . և այլն): Մի աստ ինձ, Թէ ինչի՞դ է այդ հոգսն ու աշխատութիւնը, որ հոգսն ու աշխա-

տուժիւնը: Վերջապէս հարցրեց մայրը. ի՞նչ է ասում վերջապէս
բառը (մի առ ժամանակ լուռ դիտելուց յետոյ, թէ ինչպէս
իւր ձագը միամտութեամբ . . .), Սա մեր պաշար է. ի՞նչն է
մեր պաշարը. — Ես այս խելքը միջիւններից սորուեցայ. ո՞ր խել-
քը:

Կամ մի ուրիշ օրինակ, բայց աւելի ճարտասանական ձևը
նկատել տալու համար: Ի՞նչ տարբերութիւն կայ այս նախա-
գասութիւնների մէջ.

Քեզի համար ո՛վ կը խնայէ
իրեն բուրդը:

Քեզի համար ո՛վ կը խնայէ ոչ թէ
միայն իրեն բուրդը:

Այլ և մերթը,
Նաև կեանքը:

Քեզի համար ո՛վ կը խնայէ ոչ թէ միայն իրեն կեանքը:

Այլ և մերթը:

Նաև բուրդը: —

(Երկրորդ հախադասութեան մէջ աւելի լաւ է նկարագրած
անձնութիւնը, ուր քանի գնում, այնքան աւելի ազ-
դուութիւն է ստանում տպաւորութիւնը):

Կամ թէ Աղուէսի վճռի հետեւեալ ոճերն ու բառերը պէտք է
քացատրուին.

« Անընդունելի են այդ ոչխարիդ խօսք ու բողբոջներ.

Վասն զի յայտ է նաև ամենից, որ խարդախք և չարք

Ծածկել պարտկել իւրեանց չարութիւնն են յոյժ ճարտարք.

Ի տեղեկութեանց գործոյն եւ այս յայտնի երևի:

Որ յայն գիշերին ոչխարն ի հաւուց չէր գնալ հեռի.

Դարձեալ և այս կայ, որ միսն հաւերոյն է յոյժ գովական,

Իւ ոչխարն ուներ նրանց ուտելոյ առիթ պատուական.

Ուստի ես կ'ասեմ իմ խղճմանքով թէ չէ գիմացել:

Յիշեալ երկու հաւն էլ անտարակոյս որ դա է կերել.

Եւ ձիտեւարաբ՝ պատժուի ոչխարն ըստ իւր արածին.

Ըզմիսն առնու դատաւորն արդար, մորթն գիւղացին »:

գ) Նախադասութեան անդամներ: — Դժբա պէտք է գտնուին

հարցմունքների միջնորդութեամբ, և ոչ թէ քերականական

անուանները տալով: Օրինակ առնունք այս առաջը. Օրհնութիւն հօր հաստատե զնունս արդւոց, և տնէնք մօր՝ խեն զհիմունս: Ո՞վ կամ ի՞նչն է հաստատում ո. տ—ը: Որի՞ օրհնութիւնը: Ի՞նչ է գործում հօր օրհնութիւնը, Ի՞նչ է հաստատում հ. օ—ը: Որի՞: Բայց ո՞վ կամ ի՞նչն է խում հիմունքը: Որի՞ տնէնքը, Ի՞նչ է գործում մ. ա. ը: Ի՞նչ է խում դա: (Ի՞նչ բանի հիմունքը, Որոնց. — Այս վերջին երկու հարցմունքները աւելի բ. կարգին են պատկանում):—

Այս վարժութիւնները շատ համառօտ կերպով նկարագրուեցան, սակայն յոյս ունինք, թէ ընթերցողները լաւ կըմբռնեն նոցա կարեւորութիւնը:

Ս. Մանդինեան:

ԱԶԳԱՅԻՆ

Արարտի անցեալ համարում հրատարակեցինք Ղեմարանի ԺԼ-րդ տարեդարձի տօնախմբութեան համառօտ նկարագիրը. ներկայ համարում հարկ ենք համարում հրատարակելու Ղեմարանի Արժ. տեսչի՝ հայր Նահապետ արեղայի 1888—89 ուսումնական ամի տեղեկագիրը, ընթերցողաց հետաքրքրութեանը բաւարարութիւն տալու համար, Ղեմարանի մասին: Հրատարակում ենք և պատուելի պ. Ս. Լխիցեանի՝ ընդհանուր պատմութեան և Ռուսաց գրականութեան ուսուցչի, կարդացած ճառը: